

## ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ

10.11.2017



Սիրելի հայրենակիցներ,  
Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ սրտանց շնորհավորում եմ Վայոց ձորի մարզի բոլոր համայնքների ղեկավարներին, համայնքների ավագանիների անդամներին, համայնքային ծառայողներին, համայնքային ենթակառուցվածքային կազմակերպությունների աշխատակիցներին:

Իմ շնորհավորանքն եմ հղում նաև համայնքների բնակիչներին, քանզի Տեղական ինքնակառավարման օրն իրապես տոն է նաև նրանց համար, որովհետև ՏԻ մարմինները ձևավորվում են նրանց վստահության քվեով և կոչված են լուծելու համայնքի բնակիչների սոցիալական, կենսական, կրթամշակութային և համայնքային նշանակության խնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում 1996 թվականից պաշտոնապես ուժի մեջ մտավ „Տեղական ինքնակառավարման մասին“, ՀՀ օրենքը, որը հիմք հանդիսացավ տեղական ինքնակառավարման համակարգի ներդրմանը:

ՏԻ մարմինների կողմից իրականացվող հանրային ծառայությունների համալիր կազմակերպմամբ, նրանց կողմից լիազորությունների լիարժեք կատարմամբ, իրավասությունների անթերի իրականացմամբ է նաև պայմանավորված երկրում ժողովրդավարական համակարգի զարգացումը:

Համոզված եմ, որ տեղական ինքնակառավարման համակարգի շարունակական զարգացումը ժամանակի հետ կնպաստի ՏԻ մարմինների առավել արդյունավետ գործունեությանը:

Վերստին շնորհավորում եմ Վայոց ձորի մարզի ազգաբնակչությանը Տեղական ինքնակառավարման ներդրման 21-րդ տարեդարձի կապակցությամբ և մաղթում եմ տեղական իշխանություններին՝ աշխատանքային բարձր պատասխանատվություն, իրավասությունները լիարժեք իրականացնելու վճռականություն՝ ի շահ մարզի համայնքների զարգացման, ի բարօրություն մեր ազգաբնակչության: